ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՄԱՆ
ԹԻՎ 095/2026-Ա
ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29.07.2026թ. ք.Երևան

Հիմք ընդունելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանը, ինչպես նաև «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ղեկավարի փոփոխությամբ պայմանավորված ակտիվների և պարտավորությունների փաստացի առկայությունը ստուգելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գույքագրում անցկացնելու նպատակով՝ ստեղծել գույքագրման կենտրոնական հանձնաժողով, հետևյալ կազմով՝

Կենտրոնական հանձնաժողովի նախագահ՝

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Ախոյան

Հանձնաժողովի անդամ՝

Ֆինանսական բաժնի ղեկավար-գլխավոր հաշվապահ՝ Հ. Հայրապետյան

2. Գույքագրման աշխատանքները տեղերում փաստացի իրականացնելու համար ստեղծել գույքագրման աշխատանքային հանձնաժողով հետևյալ կազմով.

Աշխատանքային հանձնաժողովի նախագահ՝

Ռեկտորի խորհրդական՝ Խ. Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝

Տեխնիկատնտեսական բաժնի ղեկավար-տնտեսվար՝ Ա. Փիլոսյան

Համակարգչային մասնագետ՝ Վ. Աթոյան

Հեռաուսուցման և SS դեպարտամենտի գլխավոր մասնագետ՝ Կ. Գաբրիելյան

Հեռաուսուցման և SS դեպարտամենտի փորձագետ՝ Է. Հակոբյան

3. Գույքագրման հանձնաժողովներին՝ իրականացնել Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գույքագրում՝

Գույքագրումը սկսել 2026 թվականի օգոստոսի 3-ից և ավարտել 2026 թվականի սեպտեմբերի 25-ին: Գույքագրումն իրականացնել 2026 թվականի օգոստոսի 3-ի դրությամբ:

Գույքագրման տվյալները հանձնել ֆինանսական բաժին՝ ոչ ուշ, քան 2026 թվականի սեպտեմբերի 25-ը:

4. Անձնակազմի և փաստաթղթաշրջանառության բաժնի ղեկավարին՝ սույն հրամանը ծանոթացնել հանձնաժողովի անդամներին:

5. Կազմակերպության նյութական պատասխանատու անձանց՝ ապահովել իրենց պատասխանատվության տակ գտնվող հաշվառված ակտիվների առկայությունը՝ ամրակցված գույքային համարներով:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Ռեկտորին:

ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԼԻԱՆԱ ՍԵՐՈՊՅԱՆ